

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հեղինե Բիշարյանի, Գագիկ Բաղդասարյանի, Հովհաննես Մարգարյանի, Իշխան Խաչատրյանի և Արծրունի Աղաջանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական օժանդակության ուսումնական վարկերի մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին և «Պետական պարտքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

«Պետական օժանդակությամբ ուսումնական վարկերի մասին Հայաստանի

Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ունենք հետևյալ դիտողությունները՝

1. 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համարում ենք անընդունելի, քանի որ այդ մոտեցմամբ պետությունն ուղղակիորեն կազդի շուկայում ձևավորված վարկավորման տոկոսադրույքների վրա, ինչը հակասում է Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած շուկայական տնտեսությամբ պետության գաղափարախոսությանը:

2. Բանկային համակարգի վրա ուղղակի ազդեցություն են ներկայացնում նաև 4-րդ հոդվածի 3-րդ մասը, 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը: Պետությունը կխաթարի ստեղծված շուկայի բնականոն գործունեությունը՝ բանկերի համար սահմանելով վարկի տոկոսագումարների առավելագույն շեմ: Ավելին, պետության կողմից նման քաղաքականության որդեգրման դեպքում առևտրային բանկերը պարզապես չեն տրամադրի ուսումնական վարկեր, քանի որ ներկայիս ձևավորված շուկայում բանկերն ավելի թանկ են վճարում դրամական միջոցներ ներգրավելու համար, քան նախատեսում է վարկի տոկոսագումարը:

3. Նախագծով չի նախատեսվում բանկերի կրած վնասի փոխհատուցման մեխանիզմ:

4. Նախագծի ընդունումը կհանգեցնի պետական բյուջեից լրացուցիչ միջոցների հատկացման անհրաժեշտության (ֆինանսական գնահատականը հնարավոր չէ տալ), մինչդեռ այդ նպատակով միջոցներ նախատեսված չեն պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի 2010 թվականի ապրիլի 30-ի N1-02 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2011-2013 թվականների պետական բյուջեներից իրականացվելիք բյուջետային ծախսերի ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներով: Ուստի այս նախագծի ընդունման դեպքում վերջինս կմնա առանց ֆինանսական ապահովման:

5. Նախագծով չի սահմանվում շահառուների համար հետագայում իրենց աշխատանքային գործունեության իրականացման պահանջը, մինչդեռ միջազգային պրակտիկայում տարածված է

այդ մոտեցումը, ըստ որի, երբ պետությունը կամ այլ գործատու ֆինանսավորում կամ սուբսիդավորում է վարկի տոկոսագումարները, տվյալ շահառուն, ըստ կնքած պայմանագրի, պարտավորվում է աշխատանքի անցնել այդ անձի մոտ՝ որոշակի ժամկետով և պայմաններով:

6. Նախագծի 3-րդ և 4-րդ գլուխներով կարգավորվող հարաբերությունները հիմնականում պայմանագրային հարաբերությունների առարկա են:

7. Նախագծի մի շարք դրույթներ հստակեցման կարիք ունեն: Մասնավորապես՝

1) 7-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված չէ, թե ինչ չափանիշներից ելնելով է հայտը ճանաչվելու «հիմնավորե կամ «ոչ հիմնավորե.

2) 7-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետում պարզ չէ, թե խոսքն ինչ «սահմանված ձևի» մասին է.

3) 9-րդ հոդվածի 1-ին մասում հայտնի չէ, թե ում կողմից և ինչ իրավական ակտով «սահմանված կարգի» մասին է խոսքը.

4) 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բանաձևը հստակ չէ, քանի որ, համաձայն նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասի, վարկի տոկոսագումարը չի կարող գերազանցել վերաֆինանսավորման տոկոսագումարից հանած 2 տոկոսային դրույքաչափը, իսկ այս պայմանը հաշվի առնելով և ըստ ներկայացված բանաձևի հաշվարկ կատարելով՝ փոխհատուցման տոկոսավճարի տոկոսադրույքն ստացվում է բացասական:

Դառնալով «Պետական պարտքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվող փոփոխություններին և լրացումներին՝ հայտնում ենք, որ պետական պարտքի և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման տեսանկյունից անընդունելի է նախատեսված ուսումնական վարկերի պետական

երաշխավորության տրամադրումը, քանի որ վարկառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում գրավի առարկայի բացակայության, իսկ հետագայում նաև վարկառուի պարտավորությունների դիմաց կատարված վճարումները դատական կարգով բռնագանձելու անհնարինության դեպքում տվյալ պարտավորությունների կատարման ապահովման միջոց կհանդիսանա պետության կողմից տրամադրված երաշխավորությունը: Արդյունքում չմարված պարտավորությունների բեռն ամբողջ ծավալով կկրի պետությունը, ինչն այս դեպքում նշանակում է պետության կողմից տվյալ երաշխավորություններն սպասարկելու համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում լրացուցիչ ֆինանսական միջոցների նախատեսում:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վարդան Արամյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

Պետական օժանդակության ուսումնական վարկերի մասին

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն օրենքի նպատակներն են ուսումնական վարկերի պետական օժանդակության համակարգի ստեղծմամբ բարձրագույն եւ միջին մասնագիտական կրթության ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործումը եւ որակյալ կրթություն մատչելիության լրացուցիչ հնարավորությունների ապահովումը:

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է պետական օժանդակությամբ ուսումնական վարկերի (այսուհետ՝ ուսումնական վարկ) տրամադրման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաեւ սահմանում է ուսումնական վարկերի տրամադրման կարգը, ուսումնական վարկերի տրամադրման բնագավառում պետական կառավարման մարմինների, բանկերի եւ վարկային այլ կազմակերպությունների իրավասությունը, վարկառուների իրավունքները եւ պարտականությունները:

Հոդված 2. Ուսումնական վարկերի մասին օրենսդրությունը

1. Ուսումնական վարկերի մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից եւ այլ իրավական ակտերից:
2. Եթե Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետեւյալ նշանակությունը՝

- 1) *Վարկառու*՝ բարձրագույն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) սովորող եւ բանկի կամ վարկային այլ կազմակերպության (այսուհետ՝ բանկի) հետ սույն օրենքով սահմանված կարգով ուսումնական վարկի պայմանագիր կնքած Հայաստանի Հանրապետության քաղաքացի, որը ուսանողական նպաստ կամ ուսման վարձի այլ փոխհատուցում չի ստանում.
- 2) *ուսումնառության պայմանագիր*՝ ուսումնական հաստատության եւ վարկառուի միջեւ կնքված պայմանագիր, որտեղ ամրագրված են վարկառուի սովորելու տարիների տեւողությունը եւ տվյալ ուսումնական հաստատությունում կրթության յուրաքանչյուր աստիճանի համար նախատեսված

ուսման վարձի ընդհանուր չափը` բաժանված ըստ ուսումնական տարիների.

3) *ուսումնական վարկ`* ուսման ծախսերի հատուցման նպատակով բանկի կողմից հիմնական կամ հարակից ուսումնական վարկի պայմանագրի հիման վրա վարկառուին տրամադրվող դրամական միջոցներ.

4) *հիմնական ուսումնական վարկի պայմանագիր`* ուսումնական վարկի պայմանագիր, որով բանկը ուսումնական հաստատությունում վճարովի հիմունքներով սովորող վարկառուին դրամական միջոցներ է տրամադրում ուսումնառության պայմանագրով սահմանված ուսման վարձի հատուցման նպատակով.

5) *հարակից ուսումնական վարկի պայմանագիր`* ուսումնական վարկի պայմանագիր, որով բանկը ուսումնական հաստատությունում վճարովի կամ անվճար հիմունքներով սովորող վարկառուին դրամական միջոցներ է տրամադրում ուսումնառության հետ կապված հարակից` սնվելու, բնակվելու, տրանսպորտի, հագուստի, ուսումնական նյութերի ձեռք բերման եւ այլ ծախսերի հատուցման նպատակով:

ԳԼՈՒԽ 2

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 4. Ուսումնական վարկերի պետական օժանդակության ձևերը

1. Ուսումնական վարկերի պետական օժանդակությունն իրականացվում է`

1) ուսումնական վարկերի առավելագույն տոկոսադրույքների կարգավորմամբ.

2) ուսումնական վարկերի պետական երաշխավորության տրամադրմամբ:

2. Հիմնական եւ հարակից ուսումնական վարկերի պայմանագրերով սահմանվող տոկոսադրույքները չեն կարող գերազանցել այդ պայմանագրերի կնքման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած առավելագույն տոկոսադրույքը:

3. Հիմնական եւ հարակից ուսումնական վարկերի առավելագույն տոկոսադրույքները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման ընդունման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման տոկոսադրույքից հանած երկու տոկոս դրույքաչափը:

4. Բանկը կարող է ուսումնական վարկեր տրամադրել սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն սահմանված առավելագույն տոկոսադրույքներից ցածր տոկոսադրույքներով:

5. Չուսումնական վարկի պայմանագրով վարկառուի ստանձնած` ուսումնական վարկի պայմանագրով վճարման ենթակա գումարներն ամբողջությամբ մարելու պարտավորությունը գրավով ապահովվելու անհնարինության դեպքում այդ պարտավորությունը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն ապահովվել պետական երաշխավորությամբ:

6. Պետական երաշխավորությամբ ուսումնական վարկի պայմանագրով նախավճար չի կարող նախատեսվել:

Հոդված 5. Ուսումնական վարկերի առավելագույն չափերը

1. Հիմնական ուսումնական վարկի պայմանագրով նախատեսված վարկի չափը չի կարող գերազանցել մեկ վարկառուի հաշվով մեկ ուսումնական տարվա համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված առավելագույն չափը (այսուհետ՝ հիմնական ուսումնական վարկի առավելագույն չափ):

2. Հարակից ուսումնական վարկի պայմանագրով նախատեսված վարկի չափը չի կարող գերազանցել մեկ վարկառուի հաշվով մեկ ուսումնական տարվա համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված առավելագույն չափը (այսուհետ՝ հարակից ուսումնական վարկի առավելագույն չափ):

Կողմերի համաձայնությամբ հարակից ուսումնական վարկի պայմանագրով կարող են նախատեսվել վարկի չափի փոփոխման (ինքսավորման) կարգ, ժամկետներ եւ (կամ) այլ պայմաններ:

3. Հիմնական կամ հարակից ուսումնական վարկի պայմանագրով նախատեսված վարկի առավելագույն չափը գերազանցող ծախսերի հատուցման նպատակով վարկառուն կարող է վարկ ստանալ ընդհանուր հիմունքներով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 6. Ուսումնական վարկերի պետական օժանդակության տրամադրման պայմանները

1. Ուսումնական վարկերի պետական օժանդակությունը տրամադրվում է ուսումնական տարվա քննությունների եւ ստուգարքների (ատեստավորման) արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած մրցութային կարգով:

2. Ուսումնական վարկերի առավելագույն տոկոսադրույքների կարգավորմամբ պետական օժանդակությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության բոլոր ուսումնական հաստատությունների ուսանողներին՝ ուսումնական վարկի պայմանագրով նախատեսված վարկառուի պարտավորությունները գրավով ապահովված լինելու դեպքում:

3. Ուսումնական վարկի պետական երաշխավորությունը տրվում է ուսումնական վարկերի առավելագույն տոկոսադրույքների կարգավորմամբ պետական օժանդակության հետ փոխկապակցված՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին:

4. Առաջին կուրսում ուսումնական վարկերի պետական օժանդակությունը տրամադրվում է ուսումնական հաստատությունների ընդունելության կանոններով սահմանված կարգով ուսումնական հաստատություն ընդունված ուսանողներին:

5. Հաջորդ կուրսերում ուսումնական վարկերի պետական օժանդակությունը տրվում է նախորդ ուսումնական տարվա քննությունների եւ ստուգարքների (ատեստավորման) արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ մրցութային կարգով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

Հոդված 7. Ուսումնական վարկ ստանալու հայտը

1. Ուսումնական վարկ ստանալու համար ուսումնական հաստատությունում սովորողը բանկ է ներկայացնում բանկի կողմից սահմանված ձևի հայտ, որին կցվում են հետևյալ փաստաթղթերը՝

- 1) անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը եւ պատճենը.
- 2) ուսումնառության պայմանագրի բնօրինակը եւ պատճենը՝ հիմնական ուսումնական վարկի պայմանագրի դեպքում.
- 3) դիմողի սովորելու (ուսումնական հաստատություն ընդունվելու) փաստը հաստատող տեղեկանք՝ հարակից ուսումնական վարկի պայմանագրի դեպքում.
- 4) սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ատեստավորում անցնելու մասին ուսումնական հաստատության տեղեկանքը.
- 5) տեղեկանք բնակության վայրից.
- 6) աշխատանքային գրքույկի բնօրինակը եւ պատճենը (առկայության դեպքում).
- 7) տեղեկանք աշխատավայրից (աշխատելու դեպքում).
- 8) գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքն հաստատող փաստաթուղթը (ուսումնական վարկը գրավով ապահովվելու դեպքում).
- 9) բանկի կողմից սահմանված այլ փաստաթղթեր:

2. Հայտը բանկի կողմից քննարկվում է ստանալու օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում: Հայտը հիմնավոր ճանաչելու դեպքում բանկը Լիազոր մարմնին է ներկայացնում հայտատուին պետական օժանդակությամբ ուսումնական վարկ տրամադրելու վերաբերյալ համաձայնություն ստանալու մասին առաջարկություն, ինչպես նաև հայտատուի կողմից բանկին ներկայացված փաստաթղթերի եւ բանկային իր գործունեության լիցենզիայի նոտարական կարգով վավերացված պատճենները:

3. Ուսումնական վարկ տրամադրելու վերաբերյալ բանկի առաջարկությունը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում Լիազոր մարմինը մերժում է պետական օժանդակություն տրամադրելուց, եթե՝

- 1) հայտատուն չի համապատասխանում սույն օրենքի պահանջներին.
- 2) բանկի տրամադրած փաստաթղթերը թերի են կամ չեն համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին:

4. Եթե բանկի առաջարկությունը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում Լիազոր մարմինը տալիս է իր համաձայնությունը ուսումնական վարկերի առավելագույն տոկոսադրույքների կարգավորմամբ կամ դրա հետ փոխկապակցված՝ ուսումնական վարկերի պետական երաշխավորության տրամադրմամբ հիմնական եւ (կամ) հարակից ուսումնական վարկ տրամադրելու վերաբերյալ, ապա Լիազոր մարմնի համաձայնությունը ստանալու օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում բանկը կազմում եւ կնքման

համար ներկայացնում է՝

1) Լիազոր մարմինն՝ ուսումնական վարկի տրամադրման պետական օժանդակության պայմանների վերաբերյալ պայմանագրի նախագիծը.

2) հայտատուին՝ ուսումնական վարկի տրամադրման պայմանների եւ գրավի (պետական երաշխավորության բացակայության դեպքում) վերաբերյալ պայմանագրի նախագծերը:

Հիմնական եւ հարակից ուսումնական վարկերի, ինչպես նաեւ ուսումնական վարկի տրամադրման պետական օժանդակության պայմանների վերաբերյալ պայմանագրերի օրինակելի ձեւերը սահմանում է Լիազոր մարմինը:

5. Հայտը ոչ հիմնավոր ճանաչելու դեպքում բանկն այն գրությամբ վերադարձնում է հայտատուին՝ նշելով հայտը մերժելու պատճառները:

6. Հայտը մերժվում է, եթե՝

1) դա չի համապատասխանում սահմանված ձեւին.

2) դրանում կամ դրան կից ներկայացված փաստաթղթերում առկա են ոչ հավաստի տվյալներ.

3) վարկի ապահովման միջոցի իրացվելիությունը ցածր է (պետական երաշխավորության բացակայության դեպքում).

4) Լիազոր մարմինը չի տվել պետական օժանդակություն տրամադրելու մասին իր համաձայնությունը.

5) վարկառուի կողմից նախկինում ստացված վարկերի գծով առկա են ժամկետանց պարտքեր (ներառյալ տույժերը):

Հոդված 8. Ուսումնական վարկի պայմանագիրը կնքելու առանձնահատկությունները

1. Հիմնական կամ հարակից ուսումնական վարկի պայմանագրի գործողության ժամանակահատվածում վարկառուն իրավունք չունի կնքելու համապատասխանաբար հիմնական կամ հարակից ուսումնական վարկի այլ պայմանագիր:

2. Հիմնական ուսումնական վարկի պայմանագրի գործողության ժամանակահատվածում վարկառուն կարող է կնքել նաեւ հարակից ուսումնական վարկի պայմանագիր:

3. Ակադեմիական արձակուրդում կամ ժամկետային զինվորական ծառայությունում գտնվող ուսանողներն իրավունք չունեն կնքելու ուսումնական վարկի պայմանագիր:

Հոդված 9. Ուսումնական վարկերի տրամադրումը

1. Հիմնական եւ հարակից ուսումնական վարկերի պայմանագրերով նախատեսված վարկերը հայտատուին են տրամադրվում բանկի եւ Լիազոր մարմնի միջեւ ուսումնական վարկի տրամադրման պետական օժանդակության պայմանների վերաբերյալ պայմանագիրը կնքելուց, հայտատուի եւ բանկի միջեւ ուսումնական վարկի տրամադրման պայմանների եւ գրավի պայմանագիրը (պետական երաշխավորության բացակայության դեպքում) կնքելուց, նոտարական կարգով վավերացվելուց եւ

իրավասու պետական մարմնում գրանցելուց, ինչպես նաև ուսումնական վարկը գրավով ապահովվելու դեպքում՝ գրավադրված գույքը սահմանված կարգով ապահովագրելուց հետո:

2. Եթե ուսումնական վարկն ապահովվում է գրավով, ապա գրավի պայմանագրի սահմանված կարգով վավերացման եւ պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են հայտատուի հաշվին: Գրավի առարկա կարող է լինել այն գույքը, որի վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրվում է բռնագանձում տարածել:

3. Հիմնական ուսումնական վարկի պայմանագրով նախատեսված վարկը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության դրամով՝ պայմանագրով սահմանված ժամկետներում եւ չափերով ուսումնական հաստատության բանկային հաշվին փոխանցելու միջոցով (այսուհետ՝ հիմնական ուսումնական վարկի գծով վճարներ):

Վարկառուի ուսումնական հաստատության բանկային հաշվին միանվագ փոխանցվող գումարը չի կարող գերազանցել ուսումնառության պայմանագրով մեկ ուսումնական տարվա համար նախատեսված ուսման վարձի չափը:

Վարկի տրամադրման օր է համարվում վարկառուի ուսումնական հաստատության հաշվին վարկի միջոցների մուտքագրման օրը:

4. Հարակից ուսումնական վարկի պայմանագրով նախատեսված վարկը բանկի կողմից տրամադրվում է Հայաստանի Հանրապետության դրամով, վարկառուին տրվող ամսական կանխիկ վճարների տեսքով (այսուհետ՝ հարակից ուսումնական վարկի գծով վճարներ)՝ պայմանագրով սահմանված ժամկետներում եւ չափերով:

5. Հիմնական ուսումնական վարկի գծով հերթական վճարները բանկի կողմից ուսումնական հաստատության հաշվին փոխանցվում են միայն վարկառուի կողմից համապատասխան ուսումնառության ժամանակահատվածում սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ատեստավորում անցնելու մասին ուսումնական հաստատության տված տեղեկանքի ներկայացման դեպքում: Ատեստավորումն անցնելու մասին ուսումնական հաստատության տեղեկանքի ձեւը սահմանում է կրթության կառավարման պետական լիազորված մարմինը, որը կցվում է հիմնական ուսումնական վարկի գծով հերթական վճարը փոխանցելու նպատակով վարկառուի կողմից բանկին ներկայացվող դիմումին:

6. Վարկառուից անկախ պատճառներով բանկի կողմից ուսումնական հաստատության բանկային հաշվին հիմնական ուսումնական վարկի գծով հերթական վճարի չփոխանցելը ուսումնական հաստատության համար չի կարող հիմք հանդիսանալ վարկառուի հետ ուսումնառության պայմանագիրը միակողմանի լուծելու համար:

ԳԼՈՒԽ 4

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԼԱԽԱՏԵՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Հոդված 10. Ուսումնական վարկը վերադարձնելը

1. Վարկառուն պարտավոր է բանկին վերադարձնել ստացված ուսումնական վարկի գումարը, դրա տոկոսները եւ վճարել ուսումնական վարկի պայմանագրով նախատեսված տույժերն ու տուգանքները:

2. Ուսումնական վարկի մարման գծով յուրաքանչյուր վճարման ենթակա գումարի մեծությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով ուսումնական վարկի չմարված գումարը, իսկ վճարումը կատարվում է ուսումնական վարկի պայմանագրի անբաժանելի մասը կազմող ժամկետացանկին համապատասխան:

Վարկային պայմանագրով վճարման ենթակա տոկոսների եւ տույժերի գումարները հաշվարկվում են՝ ելնելով վարկի չմարված գումարի չափից:

3. Ուսումնական վարկի գումարը վերադարձնելը կարող է հետաձգվել ուսումնական վարկի պայմանագրով սահմանված կարգով՝ ուսումնառության պայմանագրի գործողության ժամկետով, բացառությամբ սույն օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

4. Ուսումնառության պայմանագրի գործողության ժամկետում ժամկետային զինվորական ծառայության անցած վարկառուի, ինչպես նաեւ բանկի՝ ուսումնական վարկի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը կասեցվում է եւ վերսկսվում է վարկառուի գորացրվելուց հետո՝ ուսումը շարունակելու օրվան հաջորդող ամսվանից:

5. Եթե ուսումնական վարկի պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա վարկառուն ուսումնական վարկի գումարի դիմաց տոկոսները վճարում է ուսումնական վարկի գծով առաջին վճարի ամսվան հաջորդող ամսվանից:

6. Վարկառուն իրավունք ունի ուսումնական վարկի պայմանագրով սահմանված ժամկետից շուտ մարելու ուսումնական վարկի ամբողջ գումարը կամ դրա մի մասը:

Հոդված 11. Ուսումնական վարկ տրամադրած բանկի պարտականությունները

1. Ուսումնական վարկ տրամադրած բանկը պարտավոր է՝

1) ուսումնական վարկի պայմանագրով սահմանված յուրաքանչյուր վճարի կատարումից հետո ոչ ուշ, քան 7-օրյա ժամկետում Լիազոր մարմնին ներկայացնել համապատասխան վճարը կատարելու փաստը հաստատող փաստաթղթեր:

2) ուսումնական վարկի պայմանագրում փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարումից հետո ոչ ուշ, քան 7-օրյա ժամկետում Լիազոր մարմնին ներկայացնել համապատասխան փոփոխությունների եւ (կամ) լրացումների կատարման փաստը հաստատող փաստաթղթերի բնօրինակները:

3) ուսումնական վարկի պայմանագրի գործողությունը դադարեցվելու օրվանից ոչ ուշ, քան 7-օրյա ժամկետում այդ մասին գրավոր տեղեկացնել Լիազոր մարմնին:

2. Վարկառուից անկախ պատճառներով հիմնական ուսումնական վարկի գծով հերթական վճարը սույն օրենքով եւ հիմնական ուսումնական վարկի պայմանագրով սահմանված ժամկետներում բանկի կողմից ուսումնական հաստատության բանկային հաշվին չփոխանցելու դեպքում բանկը ուսումնական հաստատությանը վճարում է տուգանք՝ հիմնական ուսումնական վարկի պայմանագրով սահմանված չափով, բայց ոչ պակաս, քան ուսումնառության պայմանագրով ուսման վարձի վճարումը ուշացնելու դեպքում նախատեսված տուգանքի չափը:

3. Վարկառուից անկախ պատճառներով հարակից ուսումնական վարկի գծով հերթական վճարը սույն

օրենքով եւ հարակից ուսումնական վարկի պայմանագրով սահմանված ժամկետներում բանկի կողմից վարկառուին չտրամադրելու դեպքում բանկը վարկառուին վճարում է տուգանք՝ հարակից ուսումնական վարկի պայմանագրով սահմանված չափով, բայց ոչ պակաս, քան ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարակից ուսումնական վարկի գծով հերթական վճարի մեկ տոկոսի չափով:

Հոդված 12. Ուսումնական վարկի պայմանագրով Լիազոր մարմնի ստանձնած պարտավորությունների կատարումը

1. Լիազոր մարմինը, բանկի կողմից ուսումնական վարկի պայմանագրի պատճեն է ուսումնական վարկի գծով առաջին վճարը կատարելու փաստը հաստատող փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող օրվանից, ուսումնական վարկի պայմանագրի գործողության ժամանակահատվածում յուրաքանչյուր եռամսյակի համար բանկին է փոխանցում փոխհատուցման տոկոսավճարներ (այսուհետ՝ փոխհատուցման տոկոսավճարներ): Եռամսյակի համար փոխհատուցման տոկոսավճարները Լիազոր մարմնի կողմից բանկին փոխանցվում է մինչեւ տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը:

2. Լիազոր մարմնի կողմից վճարվող փոխհատուցման տոկոսավճարների տոկոսադրույքը որոշվում է $\Phi S = ԱՏկվ - (ՎՏ+2\%)$ բանաձևի միջոցով, որտեղ ΦS -ն՝ փոխհատուցման տոկոսավճարների տոկոսադրույքն է, ԱՏկվ-ն՝ ուսումնական վարկի պայմանագրի կնքման օրվա դրությամբ գործող ուսումնական վարկի առավելագույն տոկոսադրույքն է, իսկ ՎՏ-ն՝ ուսումնական վարկի պայմանագրի կնքման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման տոկոսադրույքն է:

3. Սույն հոդվածի 1-ն եւ 2-րդ մասերին համապատասխան փոխհատուցման տոկոսավճարների գումարը բանկին փոխանցելուց հետո Լիազոր մարմինը 7-օրյա ժամկետում գրավոր տեղյակ է պահում բանկին՝ նշելով ուսումնական վարկի այն պայմանագիրը, որի հիման վրա կատարվել է փոխհատուցման տոկոսավճարների փոխանցումը:

4. Վարկառուի կողմից պետական երաշխավորությամբ ուսումնական վարկի պայմանագրով ստանձնած՝ վարկի գումարը մարելու եւ դրա դիմաց հաշվարկված տոկոսները վճարելու իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Լիազոր մարմինը վարկառուի ստանձնած պարտավորությունների համար բանկի առջեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով եւ ուսումնական պայմանագրով սահմանված կարգով կրում է սուբսիդիար պատասխանատվություն:

5. Լիազոր մարմնի կողմից սուբսիդիար պատասխանատվության շրջանակներում վարկառուի պարտավորությունների դիմաց կատարված վճարները դատական կարգով վարկառուից գանձվելու դեպքում վարկառուն վճարում է նաեւ տուգանք՝ գանձված գումարի մեկ տոկոսի չափով:

Հոդված 13. Ուսումնական վարկի գծով պետական աջակցության ծախսերի ֆինանսավորումը եւ վերահսկողությունը

1. Սույն օրենքով սահմանված կարգով եւ դեպքերում Լիազոր մարմնի կողմից փոխհատուցման տոկոսավճարների վճարման եւ սուբսիդիար պատասխանատվության շրջանակներում վարկառուի պարտավորությունների դիմաց կատարված վճարները ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցների հաշվին:

2. Լիազոր մարմինը յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում հաշվետվություն պետական բյուջեից փոխհատուցման տոկոսավճարների վճարման եւ սուբսիդիար պատասխանատվության շրջանակներում վարկառուի պարտավորությունների դիմաց կատարված վճարների կատարման նպատակով հատկացված միջոցների ծախսման վերաբերյալ:

Հոդված 14. Վարկառուի կողմից ուսումնական վարկի պայմանագրի պայմանների խախտման հետևանքները

1. Ուսումնական վարկի պայմանագրի ժամկետացանկին համապատասխան վճարումները չկատարելու դեպքում վարկառուն կամ Լիազոր մարմինը՝ պայմանագրով նախատեսված դեպքերում բանկին վճարում է տուգանք՝ ուսումնական վարկի պայմանագրով նախատեսված չափով, որը չի կարող գերազանցել տվյալ ժամկետում վճարման ենթակա գումարի մեկ տոկոսը:

2. Մեկ օրացուցային տարվա ընթացքում կամ իրար հաջորդող երկու անգամ ուսումնական վարկի պայմանագրի ժամկետացանկին համապատասխան վճարումները չկատարելու դեպքում բանկն իրավունք ունի դադարեցնել ուսումնական վարկի պայմանագրով նախատեսված իր վճարումները եւ միակողմանի կասեցնել կամ լուծել ուսումնական վարկի պայմանագիրը՝ այդ մասին, մինչեւ պայմանագրի գործողության կասեցման կամ լուծման օրը, 7-օրյա ժամկետում գրավոր տեղյակ պահելով վարկառուին, Լիազոր մարմինն էլ այն ուսումնական հաստատությանը, որի հետ վարկառուն կնքել ուսումնառության պայմանագիր:

Հոդված 15. Ուսումնական վարկի պայմանագրի գործողության դադարեցումը

1. Վարկառուն իրավունք ունի ցանկացած պահի միակողմանիորեն լուծել ուսումնական վարկի պայմանագիրը՝ այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ բանկին եւ Լիազոր մարմինն գրավոր դիմում ներկայացնելու դեպքում:

Ուսումնական վարկի պայմանագիրը միակողմանիորեն լուծելու նախաձեռնության դեպքում վարկառուն պարտավոր է մինչեւ պայմանագրի լուծման օրը բանկ վերադարձնել փաստացի ստացած եւ չվերադարձված ուսումնական վարկի գումարը, ինչպես նաեւ դրա դիմաց հաշվարկված եւ չվճարված տոկոսավճարները, եթե ուսումնական վարկի պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2. Բանկի կողմից ուսումնական վարկի պայմանագիրը միակողմանիորեն լուծելու դեպքում բանկն իրավունք ունի վարկառուից պահանջելու վերադարձնել փաստացի ստացած եւ չվերադարձված հարակից ուսումնական վարկի գումարը, ինչպես նաեւ պայմանագրի լուծման օրվա դրությամբ դրա դիմաց հաշվարկված եւ չվճարված տոկոսավճարները, իսկ ուսումնական հաստատությունից՝ պահանջելու վերադարձնել փաստացի ստացած եւ չվերադարձված հիմնական ուսումնական վարկի գումարը, եթե ուսումնական վարկի պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 16. Ուսումնական վարկի պայմանագրի գործողության ժամանակահատվածում ուսումնական այլ հաստատություն վարկառուի տեղափոխման հետևանքները

1. Ուսումնական վարկի պայմանագրի գործողության ժամանակահատվածում ուսումնական այլ հաստատություն վարկառուի տեղափոխման դեպքում ուսումնական հաստատությունը եւ վարկառուն պարտավոր են տեղափոխման մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ 7-օրյա ժամկետում գրավոր տեղյակ պահել բանկին:

2. Ուսումնական այլ հաստատություն վարկառուի տեղափոխման մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ 15-օրյա ժամկետում վարկառուն պարտավոր է բանկին տրամադրել ուսումնական նոր հաստատության հետ կնքված ուսումնառության պայմանագրի մեկ օրինակը եւ բանկի կողմից սահմանված գրավոր դիմում՝ նշելով ուսումնական նոր հաստատության մասին տվյալները:

Սույն մասի առաջին պարբերությամբ նախատեսված փաստաթղթերի ստացման պահից բանկը պարտավոր է կատարել վարկառուի հետ կնքված ուսումնական վարկի պայմանագրով սահմանված իր պարտավորությունները:

3. Ուսումնական այլ հաստատություն վարկառուի տեղափոխման մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ 15-օրյա ժամկետում այդ իրավական ակտն ընդունած ուսումնական հաստատությունը պարտավոր է բանկին վերադարձնել փաստացի ստացված հիմնական ուսումնական վարկի գումարի այն մասը, որը նախատեսված է եղել ուսումնական այլ հաստատություն վարկառուի տեղափոխման օրվանից հետո ընկած ժամանակահատվածում վարկառուի ուսման համար:

4. Ուսումնական հաստատության կողմից սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտավորությունը կետանցելու դեպքում ուսումնական հաստատությունը բանկին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար վերադարձման ենթակա գումարի մեկ տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 60-օրյա ժամկետի համար:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետը գերազանցելու եւ ուսումնական հաստատության կողմից սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտավորությունը չկատարելու դեպքում վերադարձման ենթակա ուսումնական վարկի գումարը եւ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված տույժը կարող է գանձվել դատական կարգով: Այս դեպքում ուսումնական հաստատությունը վճարում է նաեւ տուգանք՝ վերադարձման ենթակա ուսումնական վարկի գումարի չափով:

6. Սույն հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերով նախատեսված գումարները բանկը պարտավոր է օգտագործել վարկառուի կողմից վճարման ենթակա տոկոսավճարների մարման, իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ ուսումնական վարկի մարման նպատակով:

Հոդված 17. Ուսումնական վարկի պայմանագրի գործողության ժամանակահատվածում ուսումնական հաստատությունից վարկառուի հեռացման հետեւանքները

1. Ուսումնական վարկի պայմանագրի գործողության ժամանակահատվածում ուսումնական հաստատությունից վարկառուի հեռացման դեպքում ուսումնական հաստատությունը եւ վարկառուն պարտավոր են հեռացման մասին համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ 7-օրյա ժամկետում գրավոր տեղյակ պահել բանկին եւ Լիազոր մարմնին:

2. Ուսումնական հաստատությունից վարկառուի հեռացումը հիմք է բանկի կողմից ուսումնական վարկի պայմանագրի միակողմանիորեն լուծելու, ուսումնական վարկի տրամադրումը դադարեցնելու եւ փաստացի տրամադրված հիմնական եւ (կամ) հարակից ուսումնական վարկի գումարը, ինչպես նաեւ ուսումնական վարկի վերադարձման օրվա դրությամբ հաշվարկված եւ չվճարված տոկոսավճարները ժամկետից շուտ վերադարձնելու պահանջ ներկայացնելու համար:

3. Ուսումնական հաստատությունից վարկառուի հեռացման մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ 15-օրյա ժամկետում այդ իրավական ակտն ընդունած ուսումնական

հաստատությունը պարտավոր է բանկին վերադարձնել փաստացի ստացված հիմնական ուսումնական վարկի գումարի այն մասը, որը նախատեսված է եղել ուսումնական հաստատությունից վարկառուի հեռացման օրվանից հետո ընկած ժամանակահատվածում վարկառուի ուսման համար:

4. Ուսումնական հաստատությունից վարկառուի հեռացման մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ 7-օրյա ժամկետում վարկառուն պարտավոր է բանկին վերադարձնել փաստացի ստացված հարակից ուսումնական վարկի գումարի այն մասը, որը նախատեսված է եղել ուսումնական հաստատությունից վարկառուի հեռացման օրվանից հետո ընկած ժամանակահատվածի համար՝ միջին օրական ծախսերի հաշվարկով:

5. Ուսումնական հաստատության կողմից սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտավորությունը կետանցելու դեպքում ուսումնական հաստատությունը բանկին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար վերադարձման ենթակա գումարի մեկ տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 60-օրյա ժամկետի համար: Այդ ժամկետը գերազանցելու եւ ուսումնական հաստատության կողմից սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտավորությունը չկատարելու դեպքում վերադարձման ենթակա ուսումնական վարկի գումարը եւ սույն մասով նախատեսված տույժը կարող է գանձվել դատական կարգով, իսկ ուսումնական հաստատությունը վճարում է նաեւ տուգանք՝ վերադարձման ենթակա ուսումնական վարկի գումարի չափով:

Սույն մասով նախատեսված գումարները բանկը պարտավոր է օգտագործել վարկառուի կողմից վճարման ենթակա տոկոսավճարների մարման, իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ ուսումնական վարկի մարման նպատակով:

6. Վարկառուի կողմից սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված պարտավորությունը կետանցելու դեպքում վարկառուն բանկին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար վերադարձման ենթակա գումարի մեկ տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 60-օրյա ժամկետի համար: Այդ ժամկետը գերազանցելու եւ վարկառուի կողմից սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված պարտավորությունը չկատարելու դեպքում վերադարձման ենթակա հարակից ուսումնական վարկի գումարը եւ սույն մասով նախատեսված տույժը կարող է գանձվել դատական կարգով, եթե հարակից ուսումնական վարկի պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

ԳԼՈՒԽ 5

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 18. Ուսումնական վարկավորման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը

Ուսումնական վարկավորման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

- 1) կարգավորում է ուսումնական վարկերի առավելագույն տոկոսադրույքները.
- 2) սահմանում է հիմնական եւ հարակից ուսումնական վարկերի պայմանագրով նախատեսվող վարկերի առավելագույն չափերը.
- 3) սահմանում է ուսումնական տարվա քննությունների եւ ստուգաքննների (ստեստավորման) արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին ուսումնական վարկեր

տրամադրելու մրցույթի անցկացման կարգը:

Հոդված 19. Ուսումնական վարկավորման բնագավառում Լիազոր մարմնի իրավասությունը

Ուսումնական վարկավորման բնագավառում Լիազոր մարմինը՝

- 1) իրականացնում է վերահսկողություն ուսումնական վարկեր տալու գործընթացի նկատմամբ
- 2) սահմանում է հիմնական եւ հարակից ուսումնական պայմանագրերի օրինակելի ձեւերը.
- 3) սահմանում է ուսումնական վարկի տրամադրման պետական օժանդակության պայմանների վերաբերյալ պայմանագրի օրինակելի ձեւը.
- 4) պետական բյուջեի միջոցների հաշվին կատարում է փոխհատուցման տոկոսավճարների վճարումը.
- 5) սույն օրենքով սահմանված կարգով եւ պայմաններով կրում է սուբսիդիար պատասխանատվություն ուսումնական վարկերի պայմանագրերի համար.
- 6) ուսումնական վարկի պայմանագրով սահմանված իր պարտավորության կատարման նպատակով բանկերից կարող է պահանջել տեղեկատվություն վարկառուներին տրամադրված ուսումնական վարկերի վերաբերյալ.
- 7) յուրաքանչյուր եռամսյակ հրապարակում է տեղեկատվություն տրամադրված պետական օժանդակության վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 6

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 20. Օրենքի ուժի մեջ մտելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Նախագիծ
Պ-929՝-09.06.2010-ԳԿ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին**

Հոդված 1. «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 17-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետում «ուսանողականն բառը փոխարինել «ուսումնականն բառով:

Հոդված 2. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետից «ուսումնական վարկ ստանալու, և բառերը հանել:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Նախագիծ
Պ-929²-09.06.2010-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին և
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին**

Հոդված 1. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին և Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-164-Ն օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ կետից «և ուսումնական վարկե բառերը հանել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Նախագիծ
Պ-929³-09.06.2010-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«Պետական պարտքի մասին և Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և
լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Պետական պարտքի մասին և Հայաստանի Հանրապետության 2008 թվականի մայիսի 26-ին ՀՕ-78-Ն օրենքի 23-րդ հոդվածում`

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

«3. Բյուջետային երաշխիքներ կարող են տրամադրվել`

1) Հայաստանի Հանրապետության այն ռեզիդենտ իրավաբանական անձանց համար, որոնք ներկայացնում են կառավարության տնտեսական ծրագրերից բխող նպատակային ծրագրի կատարման համար անհրաժեշտ և վարկի տեսքով պահանջվող գումարների հիմնավորում, որը պետք է ներառի, մասնավորապես, ծրագրի իրավական հիմքը, բովանդակությունը, խնդիրներն ու նպատակը, կատարման փուլերը և ժամկետները, վարկի վերադարձելիության ու օգտագործման դիմաց հաշվարկվող տոկոսների վճարման հնարավորության հիմնավորումը, ինչպես նաև վարկի մարման ժամանակացույցը, ծրագրի նախահաշիվը և ծախսերը հիմնավորող հաշվարկները:

2) Հայաստանի Հանրապետության բարձրագույն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող այն ռեզիդենտների, որոնք «Ուսումնական վարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ունեն պետական երաշխավորություն ստանալու իրավունք:

2) 4-րդ մասի երկրորդ պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ կետով`

«4) սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում:ե.

3) 5-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5.1-րդ կետով.

«5.1 Սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ռեզիդենտ ֆիզիկական անձինք, որոնց համար տրամադրվել են բյուջետային երաշխիքներ, երաշխիքային ծրագրի ավարտից հետո պետական բյուջե պետք է վճարեն միջնորդավճար` երաշխիքային գումարի 0.5 տոկոսի չափով:ե:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ

21-րդ դարում կրթական համակարգերի կատարելագործումը եւ կրթության ֆինանսավորումը հրատապ լուծում պահանջող տնտեսական խնդիրներից են, որոնց հատուկ ուշադրություն են արժանանում աշխարհի բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում:

Տնտեսագիտության տեսանկյունից բարձրագույն կրթություն ստանալու համար կատարված ծախսերը համարվում են ներդրում: Անհատը բարձրագույն ուսումնական հաստատությունում (այսուհետ՝ ԲՈՒՀ) ուսումնառության մասին որոշում է կայացնում՝ համեմատելով իր նյութական օգուտները եւ կորուստները: Օգուտները կարող են դրսևորվել նրանով, որ ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո նա ավելի շատ պահանջարկ կունենա աշխատաշուկայում եւ նրան, ի տարբերություն բարձրագույն կրթություն չունեցողների, կառաջարկվի ավելի բարձր աշխատավարձ: Որպես նյութական կորուստ կարելի է նշել այն օգուտները, մասնավորապես՝ աշխատավարձը, որն ուսանողը կարող էր ստանալ ուսման ժամանակահատվածում, եթե դպրոցն ավարտելուց անմիջապես հետո անցներ աշխատանքի, ինչպես նաեւ ուսման հետ կապված ծախսերը, որոնք ներառում են ինչպես ուսման վարձը, այնպես էլ ուսումնառության հետ կապված հարակից ծախսերը (բնակարանի վարձը, սննդի, գրականության, սարքավորումների ձեռքբերման, տրանսպորտային եւ այլն ծախսերը): Հետեւաբար, անհատը դպրոցն ավարտելուց հետո որոշում կկայացնի շարունակել կրթությունը ԲՈՒՀ-ում, եթե ի վիճակի լինի վճարել ուսումնառության ծախսերը եւ ակնկալելիք օգուտներն ավելի լինեն, քան սպասվելիք ծախսերը:

Արեւմտյան Եվրոպայի եւ Հյուսիսային Ամերիկայի երկրներն ունեն ԲՈՒՀ-երի ուսանողների ֆինանսական օժանդակության բավականին զարգացած համակարգ¹: Օժանդակությունն իրականացվում է տարաբնույթ մեխանիզմների միջոցով՝ պետական սուբսիդավորում, կրթական (բարեգործական) ֆոնդերի միջոցով ֆինանսավորում, համալսարանների սեփական միջոցներից տրանսֆերտների տրամադրում, ուսանողների վարկավորման համակարգ, որոնք մեծապես պայմանավորված են տվյալ երկրի կրթական համակարգի կառուցվածքից եւ պետության մասնակցության աստիճանից: Այդ երկրների համալսարաններում սովորող ուսանողների ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են՝ ուսանողների եւ նրանց ծնողների դրամական միջոցները, տնտեսության մասնավոր հատվածը (օրինակ՝ գործատուները), հարկատուները (օրինակ՝ տարատեսակ ֆինանսավորման խորհուրդները), համալսարանները եւ հովանավորները (օրինակ՝ բարեգործական հիմնադրամները): Նշված երկրներում բարձրագույն կրթության վարկավորման հիմնական նպատակն այն ուսանողներին ֆինանսական օժանդակություն ցուցաբերելն է, ովքեր ի վիճակի չեն ամբողջությամբ վճարել ուսման հետ կապված ծախսերը:

Լայնորեն կիրառվում է նաեւ ուսումնական վարկերի միջոցով ԲՈՒՀ-երի ուսանողներին ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու համակարգը: Այդ վարկերը խթանում են բարձրագույն կրթության նկատմամբ պահանջարկը՝ դարձնելով այն ավելի մատչելի, միաժամանակ՝ ուսանողներին օգնելով հաղթահարել այն խնդիրները, որոնք առաջանում են ուսման ընթացքում: Ի լրումն նշվածի, ուսանողների մոտ առաջանում է նաեւ լավ սկորելու ազդակ, որպեսզի ուսումն ավարտելուց հետո, լավ աշխատանքի անցնելով, նրանք կարողանան հաջողությամբ մարել ուսման վարկի գումարը: Ուսումնական վարկը գրավիչ է դառնում նաեւ նրանով, որ հնարավորություն է ստեղծվում վարկը ստանալ մեկ երկրում, իսկ սովորել՝ մեկ այլ երկրում:

Զարգացած երկրներում բարձրագույն կրթության վարկավորման երկու էական հատկանիշներն են՝ հանրամատչելիությունը (general availability) եւ վարկավորման ծրագրերում պետության

¹ Տվյալները ներկայացվում են ըստ՝ МОНИТОРИНГ ЭКОНОМИКИ ОБРАЗОВАНИЯ. Образовательный кредит как способ финансирования студентов. МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ. ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ - ВЫСШАЯ ШКОЛА ЭКОНОМИКИ. Информационный бюллетень 2007 5[28]. МОСКВА

մասնակցությունը (governmental participation): Հանրամատչելիությամբ ապահովվում է իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանող բոլոր (eligible students), ընդ որում՝ անապահով ընտանիքների ուսանողների կողմից ուսումնական վարկեր ստանալու հավասար հնարավորությունը: Ուսումնական վարկերը բանկերի կողմից տրամադրվելու դեպքում պետությունն ունի հետևյալ հիմնական չորս գործառնությունները՝

- 1) պետությունը կարող է կրել վարկը ուսանողի կողմից չմարելու հետ կապված ռիսկերը.
- 2) պետությունը կարող է ուսանողներին տրամադրել սուբսիդիաներ (վարկը մարելու համար նախատեսված ֆինանսական օժանդակություն), օրինակ՝ պետությունը կարող է կրել սոկոսադրույքի որոշակի մասը վճարելու պարտավորությունը.
- 3) ուսումնական վարկերի տրամադրման գործընթացում պետության մասնակցությունն օգնում է կրճատել տրանսակցիոն ծախսերը, որոնք կապված են վարկի պայմանների ճշգրտման, վարկառուի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման եւ այլնի հետ.
- 4) պետությունը կարող է օգտագործել հարկավաք մեխանիզմը կամ կենսաթոշակային համարգը, որպեսզի ուսումնական վարկավորման գործընթացում կրճատի վարչական ծախսերը: Մասնավորապես, պետությունը կարող է օրինական ձեռով ներագդել այն գործատուների վրա, որոնց մոտ աշխատում են վարկառուները, որպեսզի նրանք վարկը չմարած ուսանողների աշխատավարձից՝ ի օգուտ վարկատուների պահումներ կատարեն:

Արեւմտյան երկրներում առկա ուսումնական վարկավորման ձևերից առավել տարածված են հետևյալ երկու ձևերը՝ conventional loans («պայմանական վարկեր, որոնք կոչվում են նաև «mortgage-type Loans, այսինքն՝ հիփոթեքային վարկեր - CL եւ income contingent loans («ապագա եկամտից համարժեք վճարումներով վարկեր») -(ICL): Առաջին ձևի (CL) վարկավորման դեպքում կարգավորվում է վարկի սոկոսադրույքը (սովորաբար կարգավորվում են վարկի ընդհանուր գումարից վճարվելիք տարեկան տոկոսը, վճարման ժամանակաշրջանը (ուսանողի կողմից վարկն ամբողջությամբ մարելու ժամկետը), վճարման պայմանները (վճարման հաճախականությունը, պարբերաբար կատարվող վճարումների չափերը եւ այլն): Երկրորդ ձևի (ICL) վարկավորումը բնութագրվում է նրանով, որ վարկի դիմաց վճարումները կապված են ապագայում՝ ուսումն ավարտելուց հետո, ուսանողի կողմից ստանալիք եկամտից: Նշված ձևն ուսանողների համար առավել նախընտրելի է, քանի որ աշխատանքի անցնելուց հետո նրանք վարկի դիմաց վճարումներ կատարելու հետ կապված դժվարություններ քիչ են ունենում: Առավել հաճախ ուսանող-վարկառուներին առաջակցվում է վարկավորման ծրագիր, որն իր մեջ միաժամանակ ներառում է CL եւ ICL ձևերի հատկանիշները:

Կրթության վարկավորման հիմնական մեխանիզմները կայանում են հետևյալում:

- ԱՄՆ-ում տարածված են դաշնային եւ մասնավոր վարկերը, ընդ որում՝ վարկերը տրամադրվում են ոչ միայն ուսման, այլեւ՝ դրա ընթացքում ապրուստի համար: Դաշնային վարկերի դեպքում ուսանողի երաշխավորը ԱՄՆ կառավարությունն է, որն ապահովագրում է ուսումնական վարկեր տրամադրող բանկերին: Որպես կանոն, վարկի սոկոսադրույքը կապված է վերաֆինանսավորման սոկոսադրույքի հետ եւ տատանվում է տարեկան 4-8 տոկոսի միջակայքում, որն ընդունելի է ուսանողների բացարձակ մեծամասնության համար: Դաշնային վարկերը տրամադրվում են հաշվի չառնելով ուսանողի վճարունակությունը, որի պատճառով վարկը ստանալը բավականին դյուրին է: Դաշնային բոլոր վարկերով վճարումները թույլատրվում է հետաձգել մինչեւ ուսման ավարտը, իսկ ուսանողի կողմից

աշխատանքը կորցնելու դեպքում՝ մինչև 6 ամիս ժամկետով: Մասնավոր վարկեր ստանալն ավելի բարդ է, քանի որ պահանջվում է ամերիկյան երաշխավորի առկայություն կամ վարկը մարելու համար անհրաժեշտ եկամուտների ներկայացում, ինչպես նաև սեփականության առկայություն, որը կարող է ծառայել որպես գրավի միջոց: Մասնավոր վարկերի տոկոսադրույքներն ավելի բարձր են:

- ՇՎԵԴԻԱՅՈՒՄ ուսումնական վարկերի համակարգը գործում է 1960 թվականից: Բարձրագույն կրթությունն անվճար է, բայց ուսանողը կարող է վարկ ստանալ որպեսզի վճարի ուսման հետ կապված ապրուստի ծախսերը: Իրական տոկոսադրույքը հավասար է զրոյի (վարկի դիմաց տոկոսն ինդեքսավորվում է հաշվի առնելով վարկի դիմաց վճարումները, որը կապված է եկամտի հետ և կազմում է եկամտի 4 %-ը):
- ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ նույնպես զարգացած է պետական վարկավորման համակարգը: Ուսման համար վարկ կարող են ստանալ 18-ից 30 տարեկան բոլոր ուսանողները: Վարկն իրենից ներկայացնում է անտոկոս փոխատվություն, որը ուսանողները ստանում են յուրաքանչյուր ամիս և վերադարձնում են ուսումնական տարիներից հետո: Հատկացումները կատարվում են որոշակի պարբերականությամբ, այլ ոչ թե՛ միանվագ փոխանցմամբ, որը խթանում է ուսանողների ուսման առաջադիմության բարձրացմանը: Անբավարար գնահատականներ ստացած ուսանողները կորցնում են վարկ ստանալու իրավունքը: Գերմանիայում բարձրագույն կրթությունն անվճար է, սակայն ուսանողները պետք է վճարեն լաբորատորիաներ, գրադարաններ, սպորտային դահլիճներ այցելությունների համար: Վարկը մարելու տարբեր արտոնություններ կան, օրինակ՝ վարկի մի մասը մարվում, իսկ մյուս մասը տրամադրվում է անհատույց: Արտոնություններ կարող են ստանալ միայն անապահով ընտանիքների ուսանողները, իսկ վարկի մարման ժամկետը սովորաբար կազմում է 10 տարի:
- ԱՎՍՏՐԱԼԻԱՅՈՒՄ վարկավորման միջոցով ուսումնառության ֆինանսավորման հիմնական ծրագիրը Բարձրագույն կրթության օժանդակության Սխեման է (The Higher Education Contribution Scheme, HECS), համաձայն որի ուսանողն իրավունք ունի ստանալ վարկը, որն ամբողջությամբ ծածկում է ուսման ծախսերը: Վարկ կարելի է ստանալ ինչպես առկա, այնպես էլ ցանկացած այլ ձևի ուսուցման դեպքում: Վարկի անվանական տոկոսադրույքն իր մեջ արտացոլում է նաև սղաճի կանխատեսվող տեմպը: Վարկը դասվում է ICL ձևի վարկերի շարքին: Վարկով նախատեսված վճարումները կատարվում են ամսական կամ տարեկան կտրավածքով: Ավստրալիայում գոյություն չունի որոշակի ժամկետում վարկը «ներելու» պրակտիկա, սակայն վարկը մարելու ժամկետ սահմանված չէ:
- ՆԻԴԵՐԼԱՆԴԵՆԸՆԴՈՒՄ վարկ ստանալու իրավունք ունեն միայն առկա ուսուցմամբ սովորող՝ մինչև 30 տարեկան ուսանողները: Վարկ կարելի է ստանալ ոչ միայն ուսման, այլև՝ հարակից ծախսերի համար: Վարկի մարումը սկսվում է ուսումնական տարիներից հետո, իսկ վարկն ամբողջությամբ մարվում է 15 տարվա ընթացքում: Վարկի տոկոսադրույքը կազմում է 3,7 %: Բավարար եկամուտներ չունեցող ուսանողների համար սահմանվում են զեղչեր: Վարկավորման ծրագիրը նախատեսում է խրախուսանքի միջոցներ առավել բարձր առաջադիմություն ունեցողների համար:
- ՉԻԼԱՍՍԱՆՈՒՄ 1999 թվականից ներդրվել է ուսումնական վարկերի տրամադրման փորձնական ծրագիր: Պետությունը որպես երաշխավոր հանդես չի գալիս, այլ պահանջվում է ընտանիքի անդամների երաշխավորությունը և գրավ: Վարկի տոկոսադրույքը 2000 թվականին կազմել է 10,8 %, որի կեսը վճարել է պետությունը, իսկ մյուս կեսը՝ վարկառուն: Վարկի մարման ժամկետը 4 տարի է:

- ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ իրականացվում է ուսանողների պետական վարկավորում: Պետական բյուջեից յուրաքանչյուր տարի հատկացումներ են կատարվում, որոնք նախատեսված են ԲՈՒՀ-երում ուսման համար: Ուսման դիմաց վճարումները կատարվում են ամսական կտրվածքով, իսկ վարկի մարման ժամկետը 10-ից 15 տարի է:
- ՈՒԶԲԵԿՍՏԱՆՈՒՄ, ի տարբերություն Ղազաղստանի, ուսումնական վարկերը տրամադրում են առևտրային բանկերը՝ միայն այն քաղաքացիներին, որոնք սովորում են վճարովի հիմունքներով: Վարկի տոկոսադրույքը սահմանվում է կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքից ոչ բարձր: Արտոնյալ պայմաններով վարկավորման իրավունք ունեն ծնողագույն ուսանողները, մանկատների սաները, մանկուց հաշմանդամները եւ 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամները (անտոկոս վարկեր): Անապահով ընտանիքների ուսանողների համար պետությունը վճարում է վարկի դիմաց հաշվարկված տոկոսադրույքի կեսը:
- ԲԵԼԱՌՈՒՍՏՈՒՄ վարկեր ստանալու պայմանները հետեւյալն են՝ վարկառուի ընտանիքի մեկ շնչին ընկնող միջին ամսական եկամուտը պետք է 160 ԱՄՆ դոլարից ավելի չլինի, պետությունն օժանդակություն է ցուցաբերում վարկի դիմաց հերթական վճարման 70%-ի համար, իսկ մյուս 30%-ը վճարում է ուսանողը կամ նրա ընտանիքը: Տոկոսադրույքը սահմանված է վերաֆինանսավորման տոկոսադրույքի 1/2-ի չափով: Վարկը տրամադրվում է կենտրոնական բանկի կողմից ուղղակիորեն ուսումնական հաստատության հաշվին փոխանցելու միջոցով:
- ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ վարկ ստանալու իրավունք ունեն ոչ միայն առաջին կուրսի ուսանողները, այլև՝ վճարովի հիմունքներով սովորող մյուս կուրսերի ուսանողները: Վարկ տրամադրելու մասին որոշումն ընդունում է ուսումնական հաստատությունը, որն էլ ուսանողի հետ կնքում է ուսումնական վարկ տրամադրելու վերաբերյալ պայմանագիր: Ուսանողը կարող է չվերադարձնել վարկը՝ դրա փոխարեն 5 տարի գյուղում իր մասնագիտությամբ աշխատելու պայմանով:
- ՄՈՒԴՈՎԱՅՈՒՄ անապահով ընտանիքների եւ ծնողագույն ուսանողներն իրավունք ունեն ստանալ ուսումնական վարկեր: Վարկի մարման վերջնաժամկետը 7 տարի է՝ ԲՈՒՀՄն ավարտելուց հետո: Ֆինանսական օժանդակությունը տրամադրվում է պետության կողմից, ընդ որում՝ գերազանցիկներն ամբողջությամբ ազատվում են վարկի դիմաց տոկոսները վճարելուց, իսկ լավ սովորողները վճարում են միայն դրա կեսը:
- ԼԱՏՎԻԱՅՈՒՄ պետությունն ուսանողներին վարկ է տալիս 10 տարի ժամկետով: Սովորելու ընթացքում վարկի դիմաց վճարվող տոկոսները գրոյական են, իսկ ուսումն ավարտելուց հետո 12 ամիս անց հավասարվում են տարեկան 5%-ի: Այդպիսով, այն ուսանողը, ով ուսումն ավարտելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում վերադարձնում է վարկը՝ փաստորեն ստանում է անտոկոս ուսումնական վարկ:
- ԷՍՏՈՆԻԱՅՈՒՄ վարկ ստանալու հայտ կարող են ներկայացնել առկա ուսուցմամբ սովորող բոլոր ուսանողները, սակայն վարկը ստանալու համար պահանջվում է երկու երաշխավորի առկայություն: Պետությունն ինքն է ընտրում այն բանկերին, որոնք իրավունք ունեն ուսումնական վարկեր տրամադրել: Վարկառուն վարկատուին է վճարում պետության կողմից երաշխավորված վարկի գումարի տարեկան 5%-ը: Վարկի մարումը սկսում է կատարվել ուսումն ավարտվելուց մեկ տարի հետո: Վարկավորման ռիսկը համատեղ կրում են բանկերը եւ պետական բյուջեն:

Հաշվի առնելով վերոգրյալ միջազգային փորձը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության ֆինանսավորման ներկայիս համակարգը, ներկայացվող օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվում է բարձրագույն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնական վարկերի տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորել «Պետական օժանդակությամբ ուսումնական վարկերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով, մասնավորապես՝

- պետական օժանդակությամբ ուսումնական վարկեր տրամադրել բարձրագույն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողներին, ընդ որում՝ ուսումնական վարկը տրամադրել ինչպես անմիջապես ուսման վարձը վճարելու (հիմնական ուսումնական վարկի պայմանագիր), այնպես էլ՝ հարակից ծախսերի (անվելու, բնակվելու, տրանսպորտի, հագուստի, ուսումնական նյութերի ձեռք բերման եւ այլ) վճարման (հարակից ուսումնական վարկի պայմանագիր) նպատակով (հոդված 3).
- սահմանել ուսումնական վարկերի պետական օժանդակության ձեւերը, որոնք են՝ հիմնական եւ հարակից ուսումնական վարկերի առավելագույն տոկոսադրույքների կարգավորումը եւ ուսումնական վարկերի պետական երաշխավորության տրամադրումը: Հիմնական եւ հարակից ուսումնական վարկերի առավելագույն տոկոսադրույքները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման ընդունման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման տոկոսադրույքից հանած երկու տոկոս դրույքաչափը (օրինակ՝ 2009 թվականի դեկտեմբերի 8-ի տվյալներով՝ 3 տոկոս): Ուսումնական վարկի պետական երաշխավորությունը տրամադրվում է ուսումնական վարկի պայմանագրով վարկառուի ստանձնած՝ ուսումնական վարկի պայմանագրով վճարման ենթակա գումարներն ամբողջությամբ մարելու պարտավորությունը գրավով ապահովվելու անհնարինության դեպքում, ընդ որում՝ պետական երաշխավորությամբ ուսումնական վարկի պայմանագրով նախավճար չի կարող նախատեսվել (հոդվածներ 4-ից 6).
- առաջարկվում է առաջին կուրսում ուսումնական վարկերի պետական օժանդակությունը տրամադրել ուսումնական հաստատությունների ընդունելության կանոններով սահմանված կարգով ուսումնական հաստատություն ընդունված ուսանողներին, իսկ հաջորդ կուրսերում՝ ուսումնական վարկերի պետական օժանդակությունը տալ նախորդ ուսումնական տարվա քննությունների եւ ստուգարքների (ատեստավորման) արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած մրցութային կարգով (հոդված 6).
- սահմանել ուսումնական վարկ ստանալու կարգը (ուսումնական վարկ ստանալու համար բանկ կամ վարկային այլ կազմակերպություն ներկայացվող հայտին ներկայացվող պահանջները, պետական օժանդակության տրամադրման վերաբերյալ լիազոր մարմնի կողմից համաձայնություն տալու կարգը, վարկի ձեւակերպման եւ տրամադրման կարգերը) (հոդվածներ 7-ից 9).
- սահմանել ուսումնական վարկը վերադարձնելու կարգը, որով նախատեսված է, որ վարկը վերադարձվում է ամսական վճարումներով: Ուսումնական վարկի գումարը վերադարձնելը կարող է հետաձգվել ուսումնական վարկի պայմանագրով սահմանված կարգով՝ ուսումնառության պայմանագրի գործողության ժամկետով, բացառությամբ օրենքի նախագծի 17-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, երբ ուսանողը հեռացվում է ուսումնական հաստատությունից: Ուսումնառության պայմանագրի գործողության ժամկետում ժամկետային

զինվորական ծառայության անցած վարկառուի, ինչպես նաև բանկի՝ ուսումնական վարկի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը կասեցվում է եւ վերսկսվում է վարկառուի գորացրվելուց հետո՝ ուսումը շարունակելու օրվան հաջորդող ամսվանից(հոդված 10).

- սահմանել լիազոր մարմնի կողմից վճարվող փոխհատուցման տոկոսավճարների տոկոսադրույքը, որը որոշվում է $\Phi S = ԱՏկվ - (ՎՏ+2\%)$ բանաձևի միջոցով, որտեղ ΦS -ն՝ փոխհատուցման տոկոսավճարների տոկոսադրույքն է, ԱՏկվ-ն՝ ուսումնական վարկի պայմանագրի կնքման օրվա դրությամբ գործող ուսումնական վարկի առավելագույն տոկոսադրույքն է, իսկ ՎՏ-ն՝ ուսումնական վարկի պայմանագրի կնքման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման տոկոսադրույքն է (հոդված 12).
- սահմանել ուսումնական վարկ տրամադրած բանկի, ինչպես նաև Լիազոր մարմնի պարտականությունները (հոդվածներ 11 եւ 12).
- սահմանել վարկառու ուսանողի՝ այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու կամ ուսումնական հաստատությունից հեռացվելու դեպքում ուսումնական վարկի մարման կարգը (հոդվածներ 16 եւ 17).
- սահմանել ուսումնական վարկավորման բնագավառում պետական կառավարման մարմինների իրավասությունները (հոդվածներ 18 եւ 19):

«Պետական օժանդակությամբ ուսումնական վարկերի մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջադրումը Հայաստանի Հանրապետությունում ուսումնական վարկերի համակարգի ստեղծմանն ուղղված առաջին քայլերից է: Նախագիծն, անշուշտ, կատարյալ չէ, մասնավորապես՝ ՀՀ կառավարության կողմից համապատասխան առաջարկության դեպքում նախագծում կարող են ներառվել նաև դրույթներ, որոնցով ուսումնական վարկավորման համակարգի ներդրմամբ պայմանավորված փոփոխություններ կկատարեն նաև ներկայումս գործող ուսանողական նպաստների եւ կրթաթոշակների համակարգում: Օրենսդրական նախաձեռնության հեղինակները հատկապես կարեւորում են ՀՀ կառավարության կողմից ուսումնական վարկերի մարման ժամկետների (հատկապես՝ վարկի մարումը ուսումն ավարտելուց հետո կազմակերպելու) եւ արտոնությունների համակարգի ընդլայնմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը: Կարեւորում ենք նաև հասարակության բոլոր շերտերի, հատկապես՝ բարձրագույն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների եւ դրանց ուսանողների առաջարկները, որոնք հաշվի կառնվեն հեղինակների կողմից նախագիծը լրամշակելիս:

Հեղինակներն ակնկալում են, որ ի վերջո սույն օրենսդրական նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետությունում կներդրվի ուսումնական վարկավորման այնպիսի համակարգ, որը պահանջարկ կունենա ուսանողների մոտ, իրապես կնպաստի բարձրագույն եւ միջին մասնագիտական կրթության մատչելիության բարձրացմանը, կիջանի ուսման առաջադիմությունը, որի արդյունքում բարձրակարգ կադրերի պատրաստմամբ կապահովվի Հայաստանի Հանրապետության կայուն զարգացումը: